օրինական ուժի մեջ մտնելը (...)», հետևաբար Դատարանը, հիմք ընդունելով վերը նշված իրավակարգավորումը, գտնում է, որ հայցի մերժման պայմաններում նշված հայցի ապահովման միջոցները պետք է պահպանվեն մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

6. Դատական ծախսերը

Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին՝ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հիմքում դրել է համամասնության սկզբունքը, որը պետք է համապատասխանի բավարարված հայցապահանջին:

Հաշվի առնելով, որ հայցվորի կողմից նախապես վճարվել է պետական տուրքի գումարը, իսկ հայցն ենթակա է մերժման, ուստի Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Դատարանը, նկատի ունենալով, որ սույն գործի շրջանակներում այլ դատական ծախսերի հետ կապված պահանջ չի ներկայացվել, գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «ՍՈՒՍՄԵՏ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Աշոտ Աթաբեկյանի ընդդեմ Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ Դատական դեպարտամենտի՝ ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/01 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 2023թ. մայիսի 02-ի թիվ 5 որոշումը մասնակի՝ միայն «ՍՈՒՍՄԵՏ» ՍՊ ընկերության մասով, անվավեր ճանաչելու պահանջի մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Դատարանի 26.07.2023 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոց պահպանել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

5. Վճիռը կամովին չկատարելու դեպքում, այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ՇԻԼԱՋՅԱՆ**